

Դվին քաղաքը և նրա պեղումները (1981-1985թթ.)

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք, վարչատնտեսական, մշակութային և հոգևոր խոշորագույն կենտրոն Դվինի ավերակները գտնվում են ՀՀ Արարատի մարզում, Երևանից մոտ 35կմ հարավ: Քաղաքը հիմնադրվել է IV դ. 30-ական թթ. Հայոց Արշակունի խոսրով Կոտակ թագավորի իշխանության տարիներին (332-339թթ.) Այրարատ նահանգի արքունական սփրույթ Ոստան գավառում: Դվինի պատմությունը Հայաստանի միջնադարյան քաղաքների ուսումնասիրության համատեքստում հատուկ նշանակություն է ձեռք բերում: Պատահական չէ, որ միջնադարյան Հայաստանի հասարակական-մշակութային հարաբերությունների, արհեստային արտադրության, առևտրի, փրամաշրջանառության վերարդյալ շատ եզրակացություններ և ընդհանրացումներ կատարված են Դվինի երկամյա պեղումներով ձեռք բերված նյութերով:

Արշակունիների անկումից հետո, 428թ. Դվինը Մարզպանական Հայաստանի մայրաքաղաքն էր: 470-ական թթ. Գյուտ կաթողիկոսի օրոք Վաղարշապատից այստեղ է տեղափոխվում Հայոց հոգևոր կենտրոնը՝ կաթողիկոսարանը: Դվինի դերը երկրի քաղաքական և հոգևոր կյանքում ավելի քան բարձրանում է պարմիկների դեմ V դ. 50-ական և 80-ական թթ. ապստամբություններից հետո: Պատմիչների վկայությամբ այդ շրջանում Դվինը հիասքանչ քաղաք էր խաչածև հրապարակներով, քարե և կավաշեն տներով, գրավում էր մեծ տարածք: Քաղաքի կենտրոնում վեր է խոյացել անառիկ միջնաբերդը՝ հսկայածավալ կավաշեն պարիսպներով և շուրջ 44 աշտարակներով: Միջնաբերդը շրջափակված է եղել ջրային խրամատով, որի վրա զցված կամուրջները այն կապել են քաղաքային թաղամասերի հետ: Բուն քաղաքը նույնպես շրջապատված է եղել հզոր պարիսպներով, որոնց հետքերը նկատելի են մինչև այսօր:

Մարզպանության շրջանում քաղաքում մեծ զարգացում են ապրել արհեստները և առևտուրը: Հռոմեացի պատմիչ Պրոկոպիս Կեսարացու վկայությամբ Դվինի շրջակա գյուղերում ապրում էին երկիագործներ և առևտրականներ, որոնք աշխույժ առևտրական կապերի մեջ էին Հնդկաստանի, Վրաստանի և պարսից ու բյուզանդացիների ազդեցության տակ գտնվող ժողովուրդների հետ:

Դվինը Աերծավոր Մրևելքում միջազգային տարանցիկ առևտրի կարևոր հենակետերից էր: Այդ կապերի մասին են խոսում տարրեր երկրներից ներմուծված առարկաների, դրամների, կավե կնքադրոշմների և կշռաքարերի թագմաթիվ գտածոները: Անանիա Շիրակացու «Մղոնաչափքի» տվյալներով մայրաքաղաքից սկիզբ են առել հինգ կարևոր մայրուղիներ, որոնք Հայաստանը կապել են ժամանակի քաղաքակիրթ երկրների և առավել կարևոր տնտեսական կենտրոնների հետ:

640-ին. Դվինը գրավում են արաբները և ահավոր կոտորած սարքում քաղաքում: VII դ. վերջից շուրջ մեկուկես դար այն արաբական «Արմինիա» ոստիկանության կենտրոնն էր: Արաբական տիրապետությունը Հայաստանում ծանր հարված էր երկրի տնտեսությանը՝ արհեստային արտադրությանը, առևտրին, շինարարական գործին, որից անմաս չմնաց Դվինը: IX-XI դդ. քաղաքը կռվախնձոր էր արաբ ամիրաների և հայ Բագրատունի թագավորների միջև:

Քաղաքի շուրջ 60-ամյա պեղումների ընթացքում բացվել են միջնաբերդի և թաղամասերի՝ տարբեր դարաշրջանների պատկանող աշխարհիկ, պաշտամունքային, ամրաշինական, արտադրական ճարտարապետական կառույցներ, գտնվել են արհեստագործական արտադրանքի բազմաթիվ նմուշներ, ուրվագծվել է քաղաքի ժամանակագրական պատկերը, ճշգրտվել են քաղաքի սահմանները, ուսումնասիրվել են քաղաքային բնակչության սոցիալական տարբեր խավերի կյանքն ու կենցաղը: Դվինի պեղումները հսկայական նշանակություն ունեցան միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության և քաղաքաշինության ուսումնասիրության համար:

Դվինը հայկական միջնադարյան ճարտարապետության հաստատման կարևորագույն օջախներից մեկն է եղել: Հայաստանի վաղմիջնադարյան ճարտարապետության դասական կառույցներից են Դվինի պաշտամունքային և աշխարհիկ մոնումենտալ շինությունները: Ա. Գրիգոր Կաթողիկե եռանավ տաճարը (կառուցվել է IV դ. 2-րդ կես – V դ. սկզբներին) VII դ. վերածվում է խաչածև հատակագծով կենտրոնազմբեթ հորինվածքի: Քանդվել է 894թ. երկոռնաձև ժամանակ: Դվինի միջնաբերդի եռանավ բազիլիկ եկեղեցին (IV դ.) իր հատակագծով և ներքին հարդարանքով հայ քրիստոնեական ճարտարապետության եզակի նմուշներից է, հայ-ասորական ճարտարապետության փոխհարաբերությունների արդյունք: Նշանավոր են կաթողիկոսական երկու պալատները (V և VII դդ.)՝ կենտրոնական սյունազարդ դահլիճներով:

Դվինի արտադրանքը լայն ճանաչում ուներ ներքին և արտաքին շուկայում: Պեղումների ժամանակ գտնված բարձրաբովեստ առարկաները վերաբերում են Դվինի վարպետների հմտության, ճաշասի, բազմակողմանի ստեղծագործական մտքի մասին: Արհեստանոցների շարքերի, թրծման վառարանների, դարբնոցների և այլ արտադրական բնույթի շինությունների առկայությունը ապացույց է քաղաքի արդյունավետ տնտեսական կյանքի բարգավաճման, որին չէին կարող կասեցնել ոչ բնական աղետները և ոչ էլ օտար արշավանքները:

Դվինը հռչակված էր իբ լսեցեղեն արտադրանքով: Բրուտների արհեստանոցները և լսեցեղենի թրծման վառարանները հիմնականում տեղադրված էրն միջնաբերդի և քաղաքի պարիսպների տակ:

Դվինի ապակյա իբերի հավաքածուն Մերձավիր Արևելքում համարվում է լավագույններից մեկը: Ապակեգործությանը բնորոշ են ձևերի բազմազանությունը, րազմագունությունը, պատրաստման տարբեր հնարների օգտագործումը:

Դվինում մեծ համբավ ունեին մետաղի մշակության հետ կապված արհեստները՝ դարբնությունը, զինագործությունը, արծաթագործությունը, ոսկերչությունը և այլն: Գտնվել են երկաթե բազմաթիվ նետասլաքներ, նիզակներ, կացիններ,

թերի և գրահի բեկորներ: Հայտնի են փայտի, քարի, ոսկրի և այլնի մշակության հետ կապված շատ առարկաներ:

Դվինի բլուրը և նրա շրջակայքը բնակեցված է եղել շատ հին ժամանակներից: Պեղումների ժամանակ բացվել են վաղ բրոնզի ժամականաշրջանի (մ.թ.ա. III հազ.) խոշոր բնակավայրի հետքեր՝ կոկլոսայան կառուցվածքներով: Մ.թ.ա IX-VIII դդ. սյուստեղ գոյություն ուներ Արարատյան դաշտի կարևորագույն պաշտամունքային բնակավայրերից մեկը՝ մեհյաններով, արտադրական կառույցներով: Գտնվել են խեցեղեն բազմաթիվ նյութեր, բրոնզե և երկաթե զենքեր, գարդեր, կաղապարներ, ապակու շաղախից հազարավոր ուլունքներ: Բնակավայրը ոչնչացել է ահավոր հրդեհից, որը ուրարտացիների կողմից Արարատյան դաշտ մտնելու հետևանք է:

Մ.թ.ա. II դարում Արտաշատ մայրաքաղաքի հետ միաժամանակ հիմնադրվում է Դվինի հելլենիստական բնակավայրը: Ենթադրվում է, որ մ.թ. I դարում Դվինի մերձակայքում է հիմնադրվել Տիրի տաճարը, որն ավերվել է Հայաստանում քրիստոնեական հավատքը ընդունելու և տարածելու ժամանակ (IV դ. սկզբ):

Դվինը պարբերաբար պեղվում է 1937թ.: Պեղումների արդյունքները հիմնականում ամփոփվել են արշավախմբի ղեկավար, պատմ. գիտ. դրկտոր, պրոֆեսոր *Կարո Ղաֆադարյանի* «Դվին քաղաքը և նրա պեղումները» երկատոր մենագրությունում, որի առաջին հատորը (Երևան, 1952թ.) ընդգրկում է 1937-1939 և 1946-1950թթ. ընթացքում կատարած պեղումները, երկրորդ հատորը՝ 1951-1972թթ. աշխատանքները (յուրիս է տեսել 1982թ.), *Կ. Գ. Ղաֆադարյանի և Ա. Ա. Քալանթարյանի*, «Դվին II, Դվին քաղաքը և նրա պեղումները 1973-1980թթ.» (Երևան, 2002), *Ա. Ա. Քալանթարյանի*, «Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964-1970 թթ.» (Երևան, 1976, քաղաքի վաղ ժամանակաշրջանների վերաբերյալ՝ *Ք. Խ. Կուսնարե-Վա*, «Древнеишане памятнику Двина» (Ереван, 1977), *Գ. Գ. Քոչարյան*, «Դվին III, Դվինը անտիկ դարաշրջանում» (Երևան, 1991):

Ներկա աշխատությունը կազմում է նախորդների օրգանական շարունակությունը: Այստեղ հիմնականում տեղ են գտել Դվինի կենտրոնական թաղամասում բացված V-VI դդ. պալատական կառույցի պեղումների արդյունքները: Համակողմանի քննարկվում են այդ տեղամասի՝ 893թ. երկրաշարժի հետևանքով ավիրված VIII-IX դդ. շինություններից հայտնաբերված նյութերը: Ներկայացվում են նաև միջնաբերդի ստորին հատվածում բացված, այսպես կոչված առևտրաարհեստավիրական թաղամասի պեղումները, որոնք հսկայական նյութ են տալիս քաղաքի գոյության վերջին շրջանի վերաբերյալ, թե՛ ճարտարապետական (ժողովրդական ընկալի տներ) և թե՛ նյութական մշակույթի առումով:

Հետաքրքիր պատկեր է բացվել միջնաբերդի հարավային բուրգի շրջակայքում, որտեղ պեղվում է կրաշաղախ պատերով մոնումենտալ մի մեծ շինություն: Այս հատվածի պեղումները կարևոր են նաև քաղաքի միջնադարյան շերտագրությունը պարզելու համար:

Եվ, վերջապես, զգալի աշխատանքներ են տարվել Դվինի տարածքի հելլենիստական բնակավայրի ուսումնասիրության ուղղությամբ:

Գրքում մեծ տեղ է հատկացվում արհեստագործական տարբեր ճյուղերի արտադրանքի քննությանը, շերտագրական համոզիչ տվյալներով տրվում է այդ նյութերի թվագրությունը: Ճարտարապետական և հնագիտական նյութերի

քննարկումը հնարավորություն է ընձեռում հետաքրքիր դիտողություններ անել միջնադարյան քաղաքաշինության, քաղաքի սոցիալական պատկերի, արհեստագործության և այլ բնագավառների վերաբերյալ:

1981-1985 թվականներին արշավախմբի մասնակիցների կողմից հրատարակվել են ավելի քան երկու տասնյակ մենագրություններ և հոդվածներ, որոնք վերաբերում են միջնադարյան Հայաստանի մշակույթի, Դվրնի հնագիտական նյութերի տարբեր հարցերի ուսումնասիրությանը: Քաղաքի պեղումների արդյունքները լուսաբանվել են հանրապետական, միութենական և միջազգային գիտաժողովներում:

Աշխատության առաջին գլխում քննարկված են քաղաքի Կենտրոնական թաղամասի պեղումների արդյունքները: Դվրնի Կենտրոնական թաղամասը զբաղեցնում է միջնաբերդից արևմուտք ընկած հատվածը: Թաղամասն իբրև առանձին միավոր ձևավորվել է IV-VII դդ., երբ կառուցվել են եռանավ բազիլիկ տաճարը (հետագայում՝ կաթողիկե), միանավ բազիլիկ եկեղեցին, ապա V և VII դդ. կաթողիկոսական պալատները և այլ աշխարհիկ ու սլաշտամունքային կրթողներ:

1981-1985թթ. պեղումներն ընթացան V-VI դդ. պալատական համալիրի հարավային, հյուսիսային և արևմտյան թևերում, խնդիր ունենալով վերականգնել 894թ. երկրաշարժից այս հատվածում ավերված շինությունների հատակագծային պատկերը, հետագայում նրանց վրա կրկրն կառուցապատված շինությունների հորինվածքն ու գործառական նշանակությունը:

Որք պեղավայրը ծածկված էր ուշ շրջանի (XVI-XVII դդ.) թաղումներով: Թաղումները կատարված են աղյուսաշար, երբեմն քարաշեն աճյունավուսերում, որոնք սովորաբար դատարկ են:

Պեղումների ավարտին ամբողջացան V-VI դդ. պալատական հուշարձանախմբի սյունազարդ սրահի հարավային թևում տեղադրված սենյակները, որոնք շինանյութով և կառուցողական կերպով ներդաշնակ են պալատի կենտրոնական դահլիճի հետ և հնարավոր է նրանց համաժամանակյա լինելն ու միևնույն կառույցին պատկանելը:

Պալատի հարավային թևի արևելյան ու արևմտյան հատվածներում ձեռնարկված պեղումները մեկ անգամ ևս փաստեցին, որ երկրաշարժն ու հետագա վերակառուցումները լիովին խաթարել են վաղ միջնադարյան շենքերի ողջ շինարարական հորինվածքը, ժամանակի կառուցողական կերպը: Արդյունքում առկա են սալահատակների մասնակր մնացորդներ, անկանոն, չամբողջացող պատեր ու սենյակներ, սև տուֆե և ավազաքարե խարիսխներ, թաղերի քարեր, ջրահեռացման հորեր և նյութական այլ մնացորդներ:

Պեղումներն այս հատվածում տվեցին շերտագրական ուշագրավ պատկեր. VIII-IX դդ. պերլավայրը եղել է խիտ բնակեցված և կառուցապատված: Կառույցները բնակելի և տնտեսական նշանակության մեծ ու փոքր սենյակներ են՝ արյուսաշար պատերով, կավածեփ հատակներով: Սասանյան կրակր տաճարից արևմուտք ձեռնարկված պեղումներն ի հայտ բերեցին աղյուսաշար (հում) մի շինության ավերակներ, ուշագրավ հորինվածքով: Ըստ նախնական դիտարկումների կառույցն իր շինարարատեխնիկական առանձնահատկություններով ու մանրամասներով (պատերը նստած են տոփանած հողի վրա, առանց քարե հիմքերի, շարված խոշոր չա-

փերի հում աղյուսներով, մեջընդմեջ կավե ամուր բլուկների միացումներով) տարբերվում է IXդ. վերաբերող մյուս շինություններից: Ըստ այդմ էլ շինությունն անմիջական աղերսներ է հանդես բերում միջնաբերդի գագաթին բացված հում աղյուսե շինության հետ (արաբական շրջան) և VIIIդ. եզակի կառույցներից է Կենտրոնական թաղամասում: Շինությունն ավերվել է 894թ. երկրաշարժի ժամանակ, երբ հիմնահատակ կործանվեցին թաղամասի բոլոր կոթողային կառույցները:

Պեղումների միջոցին որոշակի աշխատանքներ են տարվել նաև թաղամասի շերտագրական սլատկերը ճշգրտելու ուղղությամբ: Պարզվել է, որ միջնադարյան հուշարձանախումբը հաստատված է անտիկ, վաղ երկաթի (մ.թ.ա. XII-IXդդ.) դարաշրջանների շերտի վրա: Միջնադարյան շերտագրական սանդղակը դիտվում է որոշ ընդհատումներով՝ V-VIդդ. ապա VIII-IXդդ. և X-XIIIդդ. սահմաններում:

1981-85թթ. պեղումներով ձեռք է բերվել հնագիտական գտածոների հարուստ տեսականի, որը կարևոր նշանակություն ունի ոչ միայն VIII-IXդդ. նյութական արտադրության հետ կապված մի շարք խնդիրների լուսաբանման տեսանկյունից, այլև պատճառաբանում են արհեստային արտադրության նոր վերելքի անխուսափելիությունը: Գտածոներն ըստ սյուռթի դաստասվում են - մետաղե առարկաներ, խեցեղեն, ապակո, դրամներ և այլն:

Մետաղե գտածոներն, հիմնականում, երկաթից են, մասամբ բրոնզե՝ պատրաստված ձուլման եղանակով:

Գործածության կերպով տարբերակվում են աշխատանքի գործիքներ, զենքեր, զարդեր և տարբեր նշանակության այլ առարկաներ:

Կենտրոնական թաղամասի վերոհիշյալ ժամանակաշրջանում գտնված խեցեղենի տեսականին արժանի է հատուկ ուշադրության: Այն թվագրվում է առավելապես IXդ., մի ժամանակաշրջան, որն Հայաստանում համաբնական է քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների գարգացման նոր շրջափուլ՝ գանգվածային արտադրության անցնելու գործընթացում:

Մի կողմից ջնարակո մուտքը, մյուս կողմից արտադրության շուկայական բնույթն ու լայն պահանջարկը, հեղաշրջում առաջ բերին խեցեգործության մեջ: Խեցեգործական արտադրանքում սկսեց նկատելի դառնալ ձևերի, հարդարամիջոցների գործածական միօբինականացումը, որը նշանակում էր շուկայական ասկանքային արտադրության սկիզբ:

Եթե IV-VIIIդդ. խեցեղենը որոշ աղերսներ, կապող տարրեր ունեղ անտիկ խեցեգործության հետ, ապա IXդ. դրանք լրիվ անհետանում են:

Դվոնի խեցեգործական արտադրանքում մեծ խումբ է կազմում շինարարական խեցեղենն իր տարբերակներով՝ կղմինդր, աղյուս, փողոակներ և այլն: Սըրանց մի մասն արտահանվել է՝ բավարարելով շրջակա բնակավայրերի ընակիչների կարիքները: Հում աղյուսով են շարված թաղամասի VIII-IXդդ. գրեթե բոլոր շինությունները:

Թրծած աղյուսներն օգտագործել են մեծ մասամբ փոքր շինություններում (ջրատար ուղիներ, օջախներ, թրծման վառարաններ), երբեմն էլ սալապատել են շինությունների կավապատ հատակները:

Դվոնի ջրամատակարարման բարդ համակարգում և կոմունալ կառույցներում լայն գործածություն ունեին խողովակներն ու փոլրակները: Կենտրոնական թա-

ղամասի գրեթե բոլոր հատվածներում բացվում են խողովակաշարեր և ջրահեռացման խիտ ցանց:

1981-85թթ. Կենտրոնական թաղամասում կատարված պեղումները տվել են ջնարակած խեցեղենի հարուստ ընտրանի: IXդ. ջնարակած խեցեղենն աչքի է ընկնում պատրաստման հնարների, անոթների ձևերի և հաբդարման միջոցների բազմազանությամբ: Ջնարակած խեցեղենի արտադրության կազմակերպման գործում Դվինն իրավամբ եղել է Մերձավոր Արևելքի արհեստագործական խոշոր կենտրոնների շարքում, իր համեստ ներգործությունը թողնելով նրանց արտադրանքի վրա:

Քաղաքն իր գոյության ընթացքում մշտապես մշակութային, առևտրական սերտ կապերի մեջ է գտնվել հարևան երկրների հետ: Դրա վկայությունն են ներմուծված մեծաքանակ գյուղերը քաղաքի տարածքում և դրանց տարատեսակ ընդօրինակումները մեր հավաքածուներում:

Առավել փոքրաթիվ են հախճապակե քիչ թե շատ ուշագրավ մոնուշները. քրեղանի և սափորի բեկորներ, հարդարված բուսական, երկոռաչափական և վիմագիր զարդատարրերով:

Ապակե գտածոները, հիմնականում, պատրաստված են սառը մշակման, կաղապարի մեջ փչելու և ազատ փչելու եղանակներով:

Գտածոներն ըստ գործածության բաժանվում են՝ առտնին գործածության սպասք, լուսավորության միջոցներ (լամպարներ, ճրագ թասեր), տեխնիկական անոթներ և այլն:

Սպասքում առավել թանկարժեք ու եզակե օրինակներից են նկարագարող գավաթի բեկորները՝ հարդարված բազմազույն բուսական ու երկոռաչափական զարդապատկերներով և արաբաառա արձանագրություններով:

Սակավ հանդիպող մոնուշներից են փորագիր գավաթ-բաժակները՝ պատրաստված կաղապարում հանդաբտ փչելու եղանակով: Ապակեգործական գտածոներում մեծ թիվ են կազմում ճրագ-թասերը կամ լամպարները: Դրանք գունային տարբեր երանգներով, բարակապատ անոթներ են, որոնք ազուցվել են աշտանակների, ջահերի ճրագակալներից:

Չանդիպում են և մոզայիկ ապակե անոթների բեկորներ, որոնք թվագրվում են VIII-IXդդ.: Առավել ուշագրավը վառվող, երփներանգ գունային խաղով գավաթի բեկորն է: Այն ունի դեղնասպիտակավուն ֆոն, լցված կարմրավարդազույն եռանկյունիներով, ձվածիր շրջաններով, կենտրոններում՝ կանաչավուն կետիկներ: Նույն շերտում հանդիպում են և խճանկարի ատարձի հատիկներ, բազմազույն երանգավորումով:

Ջարդարանքի առարկաները գերազանցապես ասարանջաններ են ամբուլջական կամ բեկորային տեսքով: Դրանց (IX-XIIIդդ. և հետագա դարեր) հատկանշական է կերտվածքի և հարդարանքի բազմաժանրությունը. հարթ կամ ոլորապտույտ մակերես, տափակ կամ ուռուցիկ, զոգավոր-ակոսավոր պատեր, փակ, իրար վրա սեղմած ծայրեր, երբեմն օձազլուխ կամ ձվածիր, վերջապես գույների երփներանգություն ու բազմազունություն:

Քարե առարկաները նյութով ու գործածության կերպով դասուսսովիւմ են. պոր-
ֆիրիտ, օնիքս, մարմար, տուֆ, պեմզա, աշխատանքի գործիքներ, սպասքի ա-
ռարկաներ, ներդիր-կշռաքար, ուլունք և այլն:

Աշխատության երկիրորդ գլուխը նվիրված է Դվինի միջնաբերդի Չարավային
բուրգի տարածքում 1981-1985թթ. կատարված պեղումներին: Դվինի միջնաբերդի
հարավային հատվածը հարավից կից է բերդապարսպին, իսկ հյուսիսից՝ բլրի
զագաթի թեք լանջին: Այդ տարածքում նախկինում կատարված հետախուզական
պեղումները շոշափելի արդյունքներ չեն տվել: 1961-63թթ. միջնաբերդի պաշտ-
պանական համակարգի հետազոտության նպատակիվ հողի թանձր շերտից
մաքրվել է պարսպի հարավային մասում կառուցված 38.7մ պարագծով աշտա-
րակներից մեկը, որի շինարվեստին բնորոշ էր տարբեր շինանյութերի համախառն
օգտագործման սկզբունքը:

Աշտարակի ստորին քարաշար հիմքին հաջորդող 1.5մ բարձրությամի թրծած
աղյուսների շարքն ավարտվում էր հում աղյուսների հսկայածավալ զանգ-
վածներով: Նման մեծ աշտարակի առկայությունը միջնաբերդի հարավային հատ-
վածում ենթադրել էր տալիս այստեղ հետաքրքիր կառույցների, գուցեև մուտքի
գոյությունը: Այս նկատառումներով, մասնավորապես պարսպին կից կառուցապա-
տումների բնույթն ու դրանց փոխհարաբերության խնդիրը պարզելու նպատակիվ,
1977 թվականից սկեած, որոշ ընդմիջումներով ծավալուն աշխատանքներ իրա-
կանացան միջնաբերդի այս հատվածում, անմիջապես աշտարակի տակ, ներսից:

1981-1985թթ. պեղումների արդյունքում հստակ դարձավ Չարավային բուր-
գին հարող տարածքում բնակչության գոյատևման ժամանակագրական սահ-
մանները, տարբեր դարաշրջանների մշակիւթի հիմնական գծերը: Միաժու-
մանակ լուծվեցին ժամանակի քաղաքաշինության հետ կապված խնդիրներ, ուր-
վագծվեցին քաղաքի պատմական ու սոցիալ-տնտեսական կյանքի առանձին
պատկերները:

Դվինի միջնաբերդի մեծ բուրգի շոջակայքը պատկանել է քաղաքի ընակելի
այն թաղամասերի շարքին, ուր մարդկային բնակիւթյան հետքերն ակնհայտ են
մ.թ.ա. III հազարամյակից մինչև XIII դարի II կեսը:

Առաջին հազարամյակե նյութերից առայժմ եայտնի են սև զույնի խեցանոթ-
ների բեկիրներ, որոնք թվագրվիւմ են մ.թ.ա. IX-VIIIդդ.:

Անմիջապես առաջին հազարամյակի հորիզոնի վիա գետնի մակերևույթից
7.0մ խորության վիա կառուցվել է 2.5մ լայնությամբ պատերով հզոր մի շինու-
թյուն: 1981-1985թթ. բացվել են 28մ երկարությամբ հաբավային և 15մ երկարու-
թյամբ արևելյան պատերը, որոնց շարվածքին բնորոշ են անկանոն տաշվածքով
որձաքաբի, ավազաքարի գետաքարի և տուֆաքարի գործածությունը, երկետղմա-
նի ամուր և ողորկ կիաշաղափի հիմքով: Սվաղի ամուր և հաստ շերտը համե-
մատաբար լավ էր պահպանված արտաքուստ:

Մոնումենտալ այս շինության ֆունկցիոնալ նշանակիւթյունը հստակ չէ (մաք-
սատուն, զինանոց, պալատ թե պարիսպ), բայց, անկասկած, այն պետական մտա-
ծելակերպով հաստատված, որոշակի նպատակի ծառայող և ժամանակի քաղա-
քական պահանջարկին համահունչ կառույց է հանդիսացել: Չետազոտությունը
պարզել է, որ այս հզոր շինությունն ունեցել է վերակառուցման մի քանի փուլեր և

կանգուն է մնացել շուրջ 3-4 դար: Վերակառուցումներն արտահայտվում են տարբեր մակարդակների վրա հստակ պահպանված հատակներով, որտեղ ամենավերջինը՝ չորրորդը, բացվում է 4.05մ խորության վրա: Այստեղ պահպանված է 0.4մ հաստությամբ հրդեհի մի շերտ, հազեցած ծիու ոսկորների, հասարակ խեցանոթների և ծածկր եղեգի մնացորդներով: Ստորին կավաշեն հատակը, որն անմիջապես դրված էր վաղ երկաթի շերտի վրա, ուներ 0.2մ լայնությամբ կրաշարլախ պլինթ և թվագրվում է շինության հիմնադրման ժամանակով (V-VIդդ.):

Երկրորդ հատակն առաջինից բարձր էր 0.90-0.95մ: Այնուհետև երրորդ հատակը բացվում է 0.90-0.95մ երկրորդից վերև: Այս չորս հատակները ժամանակագրորեն նախորդում են IX դարի շերտին և առնչվում են շինության ներքին վերակառուցումների հետ:

Շինությունը վաղմիջնադարով թվագրելու կովաններն են ոչ միայն ժամանակի շինարվեստի առանձնահատկությունները, այլև հայտնաբերված հնագիտական նյութը՝ դեղնականաչավուն խեցուց պատրաստված եղևնագարդ գոտիներով ներքուստ վարդագույն աստառով կարասի ռեկորները, կոմիներները, տաշած բլթակներով հաստապատ ապակե ռաժակները, շեղանկյուն կտրվածքով, կլոր, կարճ պոչուկով, մասսիվ իրանով եռաթև նետասլաքները, որոնց գուլգահեղները հանդիպում են V-VIIդդ. հայկական այլ հուշարձաններում (Յացավան, Օշական, Ջաքարի Բերդ և այլն):

894 թվականի երկրաշարժը Դվեն քաղաքին այդ թվում և այս հսկայածավալ կառույցին, հսկայական վնաս է հասցրել: Փլուզվումն առաջին հերթին ակնհայտ էր շինության ներսում կոաշաղախի մեծ կրուտակումներով և որոշ հատվածներում հնագիտական շերտերի խառնաշփոթով:

Ըստ երևույթին, X դարում տեղանքը հարթեցվել է ու պեղավայրի այս ու այն հատվածներում կառուցվել են սակավաթիվ նյութերով հազեցած, պարզունակ հատակագծով կացարաններ: Տեղամասում մինչ երկրաշարժը մշակութային շերտն արձանագրված է մոնումենտալ շինության արևելյան պատի արտաքին մասում, ուր հողի մակերեսից 2.2մ խորության վրա հայտնաբերվեց 775/776թ. Դվոնում հատված արաբական դրամը օղակաձև ռլթակրվ, կանաչ գույնի նուրբ բաղադրությամբ ապակե ռաժակը բեկորը ինչպես նաև IX դարով թվագրվող իոհանոցային խեցանոթների բեկորներ:

XI դարի շերտը հստակ ուրվագծվել է պեղահատվածի հարավարևելյան մասում 1.6-2.0մ խորության վրա: Այստեղ պարսպին կրց ռացվել է երկրորդական օգտագործման տուֆ քարերով շարված ամրակրու մի կառույցի արևմտյան և հյուսիսային պատերը, որոնք դրվել են մոնումենտալ շինության պատերի վրա: Շինարարական նույն հորիզոնին է վերաբերում զանգվածեղ հում աղյուսի շարվածքով աշտարակը, որը կառուցվել էր վաղմիջնադարյան շինության հարավ արևելյան անկյունից հաշված մոտ 4.0մ հեռավորության վրա: Հզոր ու բարձր այս աշտարակը ժամանակի ընթացքում բնական արհավիրքների և քաղաքական սուր բախումների հետևանքով փլուզվել է՝ ծածկելով մեծ շինության ներքին տարածքը, ուստի անհնարին էր կրրագիծը ճշտել: Նույն շերտի երկրորդ հորիզոնում բացվել են նաև ավերված շինությունների պատեր, վատ պահպանված հատակագծերով: Այստեղ, տնտեսական նշանակության հորերից մեկում հայտնաբերվել

են քիչ երկարավուն իրանով կարաս, մեջը կարմրաներկ քրեղան, դաշույն և նետասյաք, որոնք թվագրվում են XI դարով: Շերտից մասսայականորեն հանդիպող թեթև գծագրությամբ արված զարդերով և նարնջագույն, կանաչ, սպիտակ գույներանգների անգորով ջնարակած խեցեղենը, որը նորամուծություն էր տեխնիկական իմաստով, կարևորվում է ստույգ շերտից հայտնաբերված լինելու հանգամանքով:

Հարավային բուրգ տեղամասի XII-XIIIդդ. շինարարական հորիզոնը (զաբազած միջնադար) ամենահզոր շերտերից է, և խորությունը տարբեր կետերում նկատելի է գետնի մակերեսից 1.5-2.5մ խորության վրա: Այդ շերտում բացահայտվել են բնակելի և արտադրական կառույցների որոշակի կանոնակարգված, շինարարական ակնհայտ հատակագծային լուծումներով հորինվածքներ՝ տասնամյակների ընթացքում շարունակ իրականացված վերանորոգումներով: Այդ ձևափոխություններն արտահայտվում են կառույցների որմերի փոքրացումով: հատակների բարձրացմամբ, կրրառվող շինանյութի որակը փոփոխմամբ (կավ, հում կամ թրծած աղյուս, քար):

Պեղահատվածի գրեթե կենտրոնով գետնի մակերևույթից 1.5մ խորության վրա անցնում է սի նեղ փողոց (մբջանցք), որը տվյալ ժամանակաշրջանի բնակելի համալիրները բաժանել է արևելյան և արևմտյան թևերի: Արևմտյան թևը կառուցապատումների խտությամբ և տարածքների բացակայությամբ շեշտակրորեն տարբերվում է արևելյանից: Այստեղ բացված սենյակների 0.5-0.7մ լայնությամբ որմերի քարե հիմքի վրա բարձրացրած հում կամ թրծած աղյուսների շարվածքը մեծ մասամբ վնասվել է վեբին շերտերի շինարարական գործունեության հետևանքով: Ակնհայտ է նաև կառույցների վերանորոգումների փաստը, որը հիմնավորվում է տաբեր շինանյութերից կերտված (կավաշերտ, թրծած աղյուս) հատակագծերի կրած փոփոխություններով: ստորին կավաշերտին փոխարինել է թրծած աղյուսաշարը:

Դիտելի է նաև, որ վերանորոգումների ժամանակ, եբբ փոխվել են սենյակների չափերը, շատ դեպքերում օգտագործել են Կենտրոնական թաղամասի ավերված շինությունների սրբատաշ քարերը, երբեմն արձանագրված, կամ ճարտարապետական մանրամասները և տապանաքարերը:

Ինչպես երևում է այս տեղամասում բնակելի տների ծածկը եղել է հարթ, թեև ենթադրելի է երբեմն հազաբաշենի նախընտրությունը: Այդ մասին են հուշում տեղամասում կրկնակր օգտագործման համար նախատեսված, V-VIդդ. թվագրվող խարիսխի և խոյակե գյուտերը: Համեմատաբար փոքր չափերի խոյակը, որը զամբյուղաձև է և վերնասալով մեծ չափերի խարիսխը, որն անկյուններում ունի ակրսավոր եռանկյան ելուստներ, հայտնաբերվել են տարբեր սենյակների հատակը:

Թոնիրների և օջախների առատությունն ու բազմազանությունը, մշակութային այս հորիզոնում վկայում են, որ բնակչության կենսապահովման նպատակը ծառայուլ այս կաբևոբ բաղադրիչները ոչ միայն դրվել են բնակելի տան այս կամ այն հատվածում, այլ շարունակաբար նորոգվել են: Վերանորոգման հստակ պատկերը նկատելի է փողոցի արևելյան թսի բնակելի հաբկաբաժիններից մեկում, ուր 4-5 թոնիր կրղք-կրղքի բացվել են միաժամանակ: Ակնհայտ էր, որ օջախներից

մեկի գործածությունից դուրս գալու դեպքում դրվում էր նորը, պահպանելով հնի աշխատատարության հնարավոր գործակիցը:

Թոնիրների մի մասն ունեցել է արտադրական նշանակություն, ուր տնայնագործական եղանակով թրծել են կենցաղային նշանակություն ունեցող սպասք: Այդ եզրահանգումը հիմնավորում են հորերից մեկում հայտնաբերված չթրծած խուլների խոտանի կուտակումները, եռոտանու և դրոշմիչի գյուտերը:

Տարբեր տրամագծով փորված հորերի մի մասը հիմնականում ծառայել է կոմունալ նպատակների համար:

Հետաքրքիր է աղյուսաշար պատերով հորը, որն ըսա երևույթին, սկզբնական շրջանում ծառայել է իբրև գյուղատնտեսական մթերքի գետեղարան (ցորեն, գարի և այլն), իսկ հետագայում իմաստագրկվել է ու վերածվել ադրը կուտակելու հարմարանքի (նրա մեջ հայտնաբերվել է չթրծած կափարիչներ և ջնարակած խեցանոթների խոտան):

Ինչպես հորերից, այնպես էլ շերտից հայտնաբերվել են XII-XIIIդդ. խոհանոցային խեցեղեն (մրապատ քրեղաններ, կճուճներ, կաթսաներ, աղամաններ, ձիթածրագներ և այլն, սեղանի սպասքին բնորոշ կարմրափայլ դրոշմազարդ կաթսաներ և առաջին գործածության այլ խեցեղեն):

Ջնարակած անոթներն աչքի են ընկնում գուսպ և միօրինակ հարդարանքով, ու դրանց մասսայականությունը հաստատում է շուկայական պահանջարկից ելնելով պարզունակ տեխնոլոգիական հնարքների, էժանագին հումքի գործածության հանգամանքը: Տեղամասի հյուսիսարևելյան հատվածում կանաչ գույնի ապակե բաժակների միատեսակ, մասսայական գյուտերը կասկած չեն թողնում մոտակայքում ապակեգործական ինչ-որ արհեստանոցի առկայությունը: Հախճապակե կապույտ ուլունքների հարյուրավոր գյուտերը, մետաղե աշխատանքային գործիքները՝ հեղունները, թաթաքիչները, քերիչները, դանակները, մժարի թաթերը, գդալիկը, պաշտպանական հարմարանքները՝ դաշույնները, նետասլաքները, գրահի օղերը, ձիու պայտերը, ասպանդակն ու ձիասարքը, ընդհանուր գաղափար են տալիս տվյալ ժամանակաշրջանի մարդկանց կենսակերպի ու պաշտպանական միջոցների մասին:

Իսկ պարզունակ գարդերը՝ օղեր, մատանիներ, կախիկներ, ապարանջաններ և այլն, թեև պատրաստված են ապակուց, պղնձից, երկաթից ու ապակուց, բայց արտաքուստ գեղեցիկ ձևավորում ունեն, խոսում են համեստ կենցաղով ապրող բնակչության էսթետիկական ճաշակի մասին:

Հարավային բուբգ տեղամասի ամենավերին շերտը վեբաբերում է քաղաքի գոյատևման վերջին շրջանին՝ XIIIդ. II կիսամյակ: Այն ամրագրված է պեղահատվածի հյուսիսարևմտյան և հարավարևելյան հասվածներում, ուր սկսած 0.2-0.3մ խորությունից մոտ 0.8մ հաստությամբ շերտում բացվել են անկանոն հորինվածքով, բարակ որմերի հատվածներով կացարաններ, որոնց եատակագծային պատկերը վերականգնելն անհնաբին է: XII-XIIIդդ. շերտի կողմից մշակութային այս հորիզոնին պատճառած վնասներն ի հայտ են գալիս հատկապես հորերի կտրվածքում, ուր հանդիպում են ստույգ թվագրվող XIIIդ. II կեսի նյութեր: XIIIդ. II կեսի մշակութային այս շերտին բնորոշ են դրամներ (մոնդրլական, վրացական), ջնարակած ու հասարակ խեցեղեն, ապակի և այլն: Առանձնահատուկ եղանակով է

մշակած ջնարակած խեցեղենը, ուր գարդապատկերներն ուրվագծված են գծագրերին համապատասխան փորագրումով՝ դարչնագույն, կանաչ, սպիտակ ջնարակի գունային երանգներով:

Այդ խեցեղենը Հայաստանի այլ հնավայրերում (Լճի, Ապիտակի ժայռափոր բնակավայր) և հարևան Վրաստանում հայտնի են XIII-XIV դդ. շերտերում:

Աշխատության երրորդ գլխում քննարկված են Ատորին բերդի պեղումների արդյունքները: Հայաստանը, մասնավորապես Դվոնը XI դ. ավերածությունների է ենթարկվել սելջուկների արշավանքների հետևանքով: Ավելի քան մեկ հարյուրամյակ համառ պայքար է ծավալվել սելջուկ-թուրքական ամիրայությունների և զորեղացող Վրաստանի միջև: Պատմական այս կաբևոր ժամանակաշրջանում Դվոնը մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցել և միայն 1203 թվականին ազատագրվել և անցել է Ջաքարյան իշխանների հովանավորության տակ: Կարճ իսադադությունից հետո, Խորեզմի շահ Ջալալեդդինը հարձակվել է Հայաստանի վրա և գրավել Դվենը: Իսկ 1236 թ. Չարմաղանի գլխավորած մոնղոլական բանակը հիմնահատակ ավերել է քաղաքը: Այդ մասին են վեայում գրավոր աղբյուրները, ինչպես նաև Դվենի միջնաբերդում կատարված պեղումները:

Պայմանականորեն «Ատորին բերդ» անվանված տարածքում պեղումները սկսվել են 1951 թ. և շարունակվել մինչև 1981 թ.: Այդ ժամանակահատվածում բացվել են բնակելի տների հիմնապատեր, թոնիրներ, դարբնոց, գինագործի արհեստանոց և այլ մանրամասներ:

Պեղումները հավաստել են, որ միջնաբերդի լանջերը X-XIII դդ. խիտ բնակեցված են եղել: Բոլոր շինություններում կատարված վերակառուցումները պատկանել են նույն ժամանակաշրջանի տարբեր տարիներին, որտեղից և հայտնաբերվել են տարրեր զործածության առումին իրեր՝ խեցեղեն, հախճապակի, աշխատանքային գործիքներ, դրամներ և այլն:

1981-1985 թթ. նույն տարածքում իրականացված պեղումները նախորդ աշխատանքների շարունակությունն են կազմում: Առաջին տարում բացվել են բնակելի հինգ սենյակներ, որոնք հադորդակցվել են միմյանց մեջ բացվող մուտքերով և մեկ ընդհանուր միջանցքով: Շինությունների պատերը եղել են կավակերտ, հիմքերը՝ անկանոն գետաքարերով շարված: Սենյակների ներքին ինտերիերից պահպանվել են սվադի, գիպսե ծուլածո հարդարանքի և գունագարդ շքարյուսի կտորներ: Սենյակներից մեկի թոնրի կողքին բացված արտադրական նպատակի ծառայող հուն աղյուսե շարվածքով փոսորակի մեջ հայտնաբերված խեցեղենի ամրողջական և խոտան բեկորները, ինչպես նաև կտորի մեջ փաթաթված պղնձե դրամների փոքրիկ գանձը վեայում են այն մասին, որ Ատորին բերդի առաջին դարավանդում բացված սենյակները, ըստ հայտնաբերված նյութի, պատկանում են XII-XIII դդ. և ճարտարապետական առումով մեկ ամբողջություն են կազմում, պատկանել են մեկ ընտանիքի:

Երկիրդ դարավանդը առաջին դարավանդի համեմատությամբ մեկ մետր տարբերություն ուներ: Այստեղ նույնպես բացվել են բնակելի սենյակներ՝ աղյուսաշար հատակներով: ընդհանուր միջանցքով, նկիւղային հարկաբաժիններով, արտադրական-տնտեսական շինություններով: Այս հատվածում բլրի լանջին պահպանված կիկլոպյան պարսպից թափված մեծ քարեփ շարքը պատնեշ է

հանդիսացել բնակելի շինությունների համար: Նույն շինությունների փլատակների վրա XIIդ. առաջին տասնամյակում կառուցապատումներ են կատարվել, որոնք, սակայն, իրենց անփույթ շարվածքով նկատելիորեն տարբերվում էին նույն հորիզոնի վրա եղած այլ կառույցներից: Երկոորդ և երրորդ դարավանդների միջանկյալ գոտում քարե հիմքերով, հում աղյուսե միջնապատերով և ընդհանուր հիմնապատերով բացված սենյակներից մեկո փլատակների տակ հայտնաբերվել են փայտե պահարանի այրված կտորներ՝ խառնված տասնյակից ավել կավանոթների, մետաղե առարկաների, կտորի մնացորդների, դրամների հետ: Նյութի առատությունը և թվազրույնը նպաստեց նույն հորիզոնի վրա բացված շինությունների թվագրման ողոշակիությանը: Հարկ է նշել, որ այդ շինությունները կառուցվել են վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանի մշակութային շերտի վրա:

1985թ. պեղումները շարունակվել են լանջի հյուսիսային մասում՝ հում աղյուսե շարվածք ունեցող շինությունների արտաքին մասում: Բացված տարածքում միջնադարյան XII-XIIIդդ. շերտը խառնվել է վաղ բրոնզի շրջանի մշակույթի հետ: Տեղում հայտնաբերվել է հեմակ օջախ՝ վրան սև փայլաներկած կանթավոր մեծ կարաս:

Միջնաբերդի ստորին բերդի պեղված տարածքում բացված շինությունների ճարտարապետական մնացորդների քննությունը ցույց է տալիս, որ այս հատվածը իլիտ կառուցապատված է եղել: Շինություններն ունեցել են դարավանդաձև դասավորվածություն: Կառույցների հիմքերը շարվել են զետաքարերով, իսկ պատերը՝ հում աղյուսից, որոնք ներսից սվաղվել են կավով կամ սպիտակ շաղախով: Սենյակներից շատերն ունեցել են հարթ տոփանված հողե հատակներ: Նկատելի են մինչև 100-150 տարիների ընթացքում կատարված վերակառուցումների հետքերը: Հստակ կարդացվում են միջնադարյան շինարարական տարրեր հորիզոններն ու իրար հաջորդող հատակները՝ 3-4 շերտերի հաջորդականությամբ: Միջնադարյան ավելի վաղ շերտեր չեն բացվել: Կառույցների մեծ մասը նստած է անմիջապես մ.թ.ա. III հազ. մշակութային շերտի վրա:

Պեղումներից հայտնաբերվել են բազմատեսակ իրեր: Առանձնանում են քրեղաններն ու թասերը. խոհանոցային ամենագործածական անոթների առատությունը և մեծ մասի միօրինակությունն ու խոտան թեկորները վեայում են կավանոթների տեղում պատրաստելու փաստը: Վերջիններիս մի մասը գտնվել է տեղում բացված արտադրական թոնիր-վառարաններում: Շատ անոթների վրա կան վարպետի նշաններ: Կարմիրփայլ, ուռուցիկ մակերես ունեցող կճուճները կանթավոր, նեղ վզիկով սափորները ունեն խոյակերպ և երեքնուկավոր պսակներ: Գծագրության, փորագրության նկարագրողման հնարանքով և ջնարակի տարրեր զույնբերով բրոնզեգործ վարպետները ստեղծել են զարդերի այնպիսի տարատեսակներ, որոնք հանդես են եկել իրենց որոշակի գաղափարական նկարագրով, կապվել են բուսական և կենդանական աշխարհի վերածնության և անընդետա զարգացման հետ:

Դվրնում կատարվուլ ապրանքափոխանակության և ներքին առևտրի մասին են խոսում պեղումներից հայտնաբերված դրամները: Դրանք XII-XIIIդդ. պղնձե դրամներ են, որոնք գտնվել են արտադրական և ընակելի շինությունների հատակին, հաճախ գանձի ձևով (էլտկուզյան, վրացական): Հայտնաբերվել են կեն-

դանիների ոսկորներ, տարբեր միզերի (ծիրան, ղեղծ, սալոր, խաղող) կորիզներ, ձվի կեղևներ և այլն: Իսկ դիպակե գործվածքի մի կտորը հիշողություն է միջնադարում պատրաստված ոսկեթել և արծաթաթել այն դիպակների, որոնք հոչակված են եղել ոչ միայն Հայաստանում, այլև տարբեր երկրների շուկաներում:

Հայտնաբերված նյութի քննությունը վեայում է, որ XII-XIIIդդ. Դվենի միջնաբերդի ստորին հատվածում ապրող բնակչության հիմնական մասը միջին կարողության տեք արհեստավորներ են եղել, որոնք և կարողացել են պահել քաղաքային կյանքը: Նրանք տեղում պատրաստել և օգտագործել են արհեստագործական արտադրանքի այնպիսի օբյեկտներ, որոնք այսօր համադրվում են Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի նյութերի հետ, ձեռք են բերում ժամանակագրական և շերտագրական որոշակիություն, հստակեցնում են միջնադարյան մշակույթի հետ կապված շատ առանձնահատկություններ:

Չորրորդ գլուխը վերաբերում է անտիկ շերտի ուսումնասիրությանը Կենտրոնական թաղամասում և միջնաբերդում:

Կենտրոնական թաղամասում, կաթողիկե եկեղեցու վաղ աբսիդից հարավ ընկած պեղավայրում բացահայտվել են վաղմիջնադարյան՝ V-VIIդդ. մշակութային նստվածքներ. VIIդ. սկզբին կառուցված ջրամատակարարման համակարգի կավե խողովակաշարի հատված, հրդեհի հետևանքով V-VIդդ. ավերված տնտեսական շինության մի մաս, VIդ. հիմնահողային և սալարկղային թաղումներ և տուֆե թևավոր խաչերի մանրամասներ:

Կաթողիկեի IV-Vդդ. եռանավ բազիլիկո շինարարության ընթացքում առաջացած սպիտակ խճի շերտի տակ հայտնաբերվել են հելլենիստական դարաշրջանի գունագարդ խեցեղեն և կարասային թաղում, որը հատել է անմիջապես հաջորդ՝ մ.թ.ա. I հազարամյակե շերտը:

Կենտրոնական թաղամասում, որ վաղ միջնադարում Դվինի հոգևոր կենտրոնն էր, ղեռնա նախորդ տարիների պեղումներով բացահայտվել են՝ մ.թ.ա. I հազ. սկզբի և IV-Vդդ. շերտերի միջև, Արտաշիսյան շրջանի թույլ արտահայտված մշակութային շերտ, դամիարանադաշտ: Ընտիր գունագարդ խեցանոթների բեկորներով հագեցված քննվող շեքտում թեև բացակայում են շինարարական մնացորդներ, սակայն այս նույն տարածքի վաղմիջնադարյան հոգևոր շինությունների շարվածքի մեջ վերստին օգտագործված մեծ թվով սրբատաշ սալերը և վարպետորեն կերտված ճարտարապետական մանրամասները, բնականաբար, պատկանելիս են եղել նախորդ շրջանի ավերված շինություններին: Ի լրումն նշենք, որ կաթողիկե եկեղեցուց արևմուտք հայտնաբերվել է բազալտե ծածկասալ, որ նյութով և մշակումով աղերսվում է Գառնիի հեթանոսական տաճարի ծածկասալերին: Թվարկված նյութական տվյալներից և մ.թ.ա. I հազ. ի վեր այս հնագույն սրբավայրի ավանդապահ տևականությունից ելնելով, հավանական է տաճարի գոյություն այստեղ նաև քննվող ժամանակաշրջանում:

Վաղմիջնադարյան հոգևոր շինությունների ներսում և շրջակայքում առայժմ բացված հելլենիստական շրջանի բոլոր 16 թաղումները կատարված են կենցաղում օգտագործված կարասների մեջ, տեղաբախշված են անհամաչափորեն, կարասների կտրված թերի մասերը ծածկված են այլ կենցաղային խեցանոթների բեկորներով, թաղման գույքը սուղ և աղքատիկ է կամ խսպառ բացակայում է:

Ամենայն հավանականությամբ, մ.թ. 10. կեսին, երբ հոռմեական գորավար Կորբուլոնի արշավանքի հետևանքով Դվինն ամբողջովին ավերված և հրկիզված էր, վնասված և տուժած հնագույն սրբավայրի տարածքը մի կարճ ժամանակահատվածում վերածվել է դամբարանադաշտի:

Միջնաբերդում պեղումները կենտրոնացվել են բլրի գագաթային տարածքում: Այստեղ, «րակ» պեղավայրում, մ.թ. 10. հրկիզված շերտում բացված հելլենիստական շրջանի մեծ շինության քարե հիմքերը վաղ միջնադարում վերստին օգտագործվել են, իսկ գունագարդ խեցեղենի, հում աղյուսների բեկորներով հագեցված, կարմրավուն մոխրառատ շերտը հարթեցվել է և վրան տոփանվել նոր կավակերտ հատակ: Թեև կառույցը մասամբ մնացել է VIII դ. հում աղյուսե շինության տակ, սակայն ակնհայտ է, որ այն ծավալվում է դեպի հարավ-արևմուտք՝ ընդհուպ բլրի լանջահայաց հզոր պատը և սրան ուղղահայաց միջանցքից դեպի հյուսիս-արևմուտք: Այս հատվածները պեղելուց հետո, թերևս հնարավոր կլինի ներկայացնել շինության հատակագծային պատկերը: Քննվող շինությունը կառուցված է մ.թ.ա. VIII դ. ավերված և հրկիզված վաղ երկաթի դարաշրջանի բնակավայրի գորշ, մոխրառատ շերտի վրա:

Բլրի գագաթի հյուսիսարևելյան մասում բացվել է հելլենիստական շրջանի շինություն, որը մ.թ. 10. կեսին ավերվելուց և հրկիզվելուց հետո, տևականորեն, ներառյալ XII-XIII դդ., աղճատվել է մահ նույն այս տարածքում իրականացված ծավալուն շինարարության հետևանքով: Շինության բացված մասի հարավային շարունակությունը IV դ. մնացել է եռանավ եկեղեցու, իսկ հյուսիսայինը՝ V-VI դդ. աղյուսաշեն շինության տակ, արևմտյան թևի վիայրվ՝ հյուսիսից հարավ ձգվել է VIII դ. հում աղյուսե մեծ շինության հաստահեղույս պատը, իսկ հյուսիսարևելյան հատվածը XII-XIII դդ. համահարթեցվել է և վաղ երկաթի դարի շինվածքների վիակառուցվել տնտեսական հարկարաժիններով բնակելի համալիր: Թվարկածից գատ, վերկից իջեցված IX-XIII դդ. բազմաթիվ հորերը տարբեր մակարդակներում հատել և խաթարել են ստորին մշակութային շերտերը այս ամբողջ տարածքում: Արա հետևանքով երկաթի դարի, Արտաշեսյան շրջանի և միջնադարյան նյութերը հաճախ ներկայանում են մեկ՝ «խառը» շերտով: Ընդ որում, շինության տարբեր հատվածներում խորանալիս՝ անմիջապես բացվում է երկաթի դարաշրջանի մշակութային շերտը շինարարական մնացորդներով և բնորոշ սև գույնի խեցեղենով:

Մասամբ բացված շինությունը այսուհանդերձ ներկայանում է որոշակի հատակագծային հորինվածքով: Ուրվագծվում են in situ սյան սալիտակ ավազաքարե գույգ տորածև խարիսխներով կենտրոնական սրահը և սրան կից՝ երկայնակի և լայնակի սենյակներ: Արևմտյան թևում, որտեղ ևս (60-ականներին) բացվել են սյան գույգ խարիսխներ, առկա են՝ պարբերաբար նորոգումների և փոփոխությունների ենթարկված, կենցաղային խեցանոթներով հագեցված, տնտեսական հարկաբաժիններ: Արևելյան թևում պահպանվել են քարե լայն հիմքերով երկայնակի սրահ և կից՝ գուգահեռ միջանցք: Հյուսիսային և հարավային թևերը, ամբողջովին գտնվելով վաղմիջնադարյան շինությունների տակ, բացվել են առանձին պատերի ձևով (սոսկ հետախուզական բնույթի պեղումների միջոցով): Ի տարբերություն արևմտյան հարկաբաժիններում հնագիտական նյութերի առատությանը, դրանք անհամեմատ քիչ են ինչպես կենտրոնական, այնպես էլ մյուս

բոլոր թևերում: Շինության հիմքերը և պատերի ստորին մասերը շարված են կավե շաղախով ամրացված միջին չափի դետաքարերով, իսկ վերնամասը՝ հում աղյուսով: Հատակները տոփանված են, հարթեցված են կավե լուծույթով:

Սյան տորածն խարիսխները տաշված են սպիտակ ավազաքարե մեկ ամբողջական զանգվածից: Արևմտյան թևում հայտնաբերված գույզը՝ քառակուսի ներքնասալի վրա գույզ տորուսով է, իսկ կենտրոնական սրահի խարիսխների նեղ թմբիկով բոլորված, տափակ, շրջանաձև տորուսը միանում է քառակուսի ներքնասալին թույլ արտահայտված պրոֆիլով:

Այստեղ, in situ բացված սյան տորածն խարիսխներով սենյակները, հավանաբար, ունեցել են երդիկային ծածկ և կատարել բաժանմունքները խմբավորող ընդհանուր սենյակի դեր: Այսինքն, բացահայտվում է հատակագծային հորինվածքի ավանդական սխեման, որն ընկած է նաև Արտաշատի համաժամանակյա՝ մ.թ.ա. II-III դդ. բնակելի համալիրների հիմքում: Ավանդական ընունք են կրում և սյան տորածն խարիսխները. սրանք որոշակի փոփոխություններով հարատևում են նաև վաղ միջնադարում:

Քննվող շինությունը բացվել է 1.5մ հզորություն ունեցող՝ մ.թ.ա. II-III դդ. թվագրվող մշակութային շերտում: Հիմնական պատերին՝ միջնորմների անկանոն կցված լինելը, փոփոխությունների և վերանորոգումների ակնհայտ հետքերը, երեք տարրեր մակարդակների կավակերտ հատակների առկայությունը, իրավամբ հավաստում են շինության տևական գոյության մասին: Իսկ պատերի փլվածքներով, խեցանոթների բեկորներով հագեցված մոխրաոստ միջավայրի առկայությունը, ինչպես նաև կենտրոնական սրահում, վերին հատակի վրա երեսնիվայր ընկած մարդու զանգը և կնախքի ոսկորները վեայում են հանկարծահաս ավերածության և հրդեհի մասին: Կրակի մեջ թռվելուց վառ կարմիր գույն ստացած հում աղյուսե պատերի վերնամասերի փլվածքների շերտը նույնաման է՝ մ.թ. II դ. կեսին կործանված բնակավայրի ամիողջ բլրով մեկ որոշակե մակարդակե վրա փաստագրված հրդեհի շերտի հետ:

Բլրի գագաթին բացված հելլենիստական շրջանի շինությունների և կենտրոնական թաղամակի համաժամանակյա շերտի պեղումներով ձեռք բերված հնագիտական գտածոների գերակշիռ մասը խեցանոթների հավաքածուն է (սեղանի սպասք, տնտեսական և խոհանոցային անոթներ): Խեցանոթների տեսականին հիմնական ձևերով և հարդարումով սերտորեն ադերսվում է Արարատյան հովտի խոշոր խեցեգործական օջախների՝ Արմավրի, Արտաշատի, Գառնիի արտադրանքին և ընդգրկվում մ.թ.ա. II-III դդ. ժամանակագրական շրջանակների մեջ: Ջարդամոտիվների ինքնատիպ լուծումներով Դվրնի հայտնի գունազարդ տափաշների և կարասների հավաքածուն համալրվել է պարող մարդիկ հիշեցնող պատկերազարդ տափաշի և ցլապատկեր կարասի բեկորներով:

Տեղադրության, շինարվեստի, մասամբ նաև հնագիտական նյութերի համեմատական վերլուծությամբ կարելի է ենթադրել, որ գագաթի հյուսիսարևելյան հատվածի՝ կենտրոնական սյունազարդ սրահով շինությունը վարչատնտեսական դեր է ունեցել հելլենիստական շրջանի Դվրնի համար: Հավանաբար, որոշակե հասարակական դեր է կատարել և «բակ» տարածքում ճյուղավորված մեծ շինությունը, որը վերակառուցվել և գործել է նաև վաղ միջնադարում: Ըստ նախնական

դիտարկումների՝ ըլրի լանջահայաց որոշ մասերում հատվածարար պահպանված, վաղագույն ժագում ունեցող պարսպագուռին գործել է և քննվող շրջանում: Այսինքն, պարսպով շրջափակված ըլրի գագաթի սահմանափակ տարածքը մ.թ.ա. II դարում խիտ կառուցապատվում է քաղաքացիական շինություններով:

Մ.թ.ա. VIII դարում՝ Վանի թագավորության նվաճումների ընթացքում հիմնովին ավերված Դվինի ամրոցը՝ Արտաշատի հիմնադրման առնչությամի, մ.թ.ա. II դ. կեսերին վերակառուցվում է որպես նորաստեղծ մայրաքաղաքի առավել խոցելի յուսիսային դարպասի մատույցները հսկող ամիոց:

Միջնարերդի եռանավ եկեղեցու ներսում ռացվեց եռանկյունաչափական կետի տակ թողնված ռարծունքը (5x5մ), ուրից՝ որպես Օ-ական կետ կտրվածքների ժամանակ կատարվում էին ռոլոր չափումները: Պեղումներով ռացվեց յոթ շինարարական շրջան (ճարտարապետական մնացորդներ և հնագիտական նյութ)՝ IV դ. II կեսից մինչև XIII դ. կեսը ժամանակագրական ընդգրկումով:

Լրացուցիչ պեղվեց և մանրակրկրտ ուսումնասիրվեց միջնարերդի հիշյալ IV դ. եռանավ եկեղեցու շինությունը, որը ռացվել է դեռևս 1961-1962թթ. և համարվել հայ Արշակունյաց թագավորների գահամիստ դահլիճ:

Շինության նոր հետազոտությունները էապես փոխեցին նրա հատակագծային հորինվածքի վերաբերյալ նախկրն պատկերացումը: Կրաշաղախ հատակի վրա հստակ գծագրվող խարիսխների տեղադրության նորահայտ հետքերի շնորհիվ ճշգրտվեց կողմնային և կենտրոնական նավերի յայնությունը: Պարզվեց, որ ռոլոր ութ սյունախարիսխները դրվել են՝ տուֆի և ավազաքարի մեծ ռոկներից շարված տարրեր չափերի ուղղանկյուն կամ քառակուսի հիմնահարթակների կենտրոնում: Հարթակները կառուցվել են հնարավոր նստվածքները մեղմելու նկատառումով: Սրանց քարերի վրա պահպանվել են կրաշաղախի, կարմիր և սպիտակ ներկերի հետքեր, առկա են նաև պատուհանների ռացվածքների կամ խորշերի անկյունաքարեր (պատկանել են արդեն ավերված ինչ-որ մոնումենտալ շինության): Ըստ երևույթին V դ. կեսերին սյունագաղղ սրահը վերակառուցվել է՝ ղղվել են սյուների հիմնահարթակները և հատակը երեսպատել կրաշաղախով (որոշ հատվածներում պահպանվել է նախնական՝ ամուր տոփանված, կավակերտ հատակը): Հատակների միջանկյալ շերտում հայտնարերված կղմինդրները հավաստում են, որ սրահը եղել է կղմինդրածածկ: Արահի կենտրոնական գահավորակը և հարավային պատի միջև ռացվել են VII դ. թաղումները՝ կատարված կառույցի ավերվելուց հետո:

Այսպիսով, դահլիճն իրենից ներկայացնում է IV դ. կառուցված հայկական եռանավ ռագիլիկ սրահների վաղագույն ձևերից մեկը: Դահլիճի եկեղեցի լինելու փաստը հաստատվում է ժանրակշիռ կրվաններով:

1. Շինությունը ճիշտ կողմնորոշված է արևմուտքից արևելք՝ ռնորոշ քրիստոնեական կառույցներին:
2. Այն իրենից ներկայացնում է առանձին կանգնած կառույց, որը հատուկ է վաղ քրիստոնեական պաշտամունքային հուշարձաններին:
3. Կարևոր նշանակություն են ձեռք ռերում շինության ներսի թաղումները և թևավոր խաչերի ռեկորները: Որպես կանոն միջնադարյան գերեզմանոցները և թաղումները նկատվում են եկեղեցիների շրջակայքում, շատ հազվադեպ՝ ներսում: Դվնումը թաղման այս ավանդույթը շարունակվել է նաև

սրահի ավերումից հետո և, հավանարար, այստեղ թաղվել են 640թ. քաղաքի ավերման ժամանակ զոհված բնակիչներից, գուցե հոգևորականներ:

4. Եռանավ սրահի հիմնական բաղադրամասերից մեկն է կենտրոնական գահավորակը (bema), որը կապ չունի արքունի կառույցների հետ: Նման գահավորակները լայն տարածում ունեին վաղքրիստոնեական ասորական միանավ և եռանավ բազիլիկներում (Սինհար, Քիրքբիզե, Քֆեիր, Քալբ-լոզե): Դվրնի բազիլիկայի գահավորակն իբ հատակագծով զրեթե կրկնում է Բրադի սբ. Գուլիանոս եկեղեցու գահավորակը:

Դվրնի եռանավ սրահը նման մանրամասներով, հայկական վաղմիջնադարյան պաշտամունքային հուշարձաններից առայժմ միակ պահպանված օրինակներից է: Արահի որոշ հատվածներ մնացել են անձեռնմխելի, քանի որ քանդվելուց հետո չեն վերականգնվել, և հատակագծային հորինվածքի շատ մանրամասներ պահպանվել են անփոփոխ, սկզբնական տեսքով:

Դվրնի միջնաբերդում բացված եռանավ սրահը հայ քրիստոնեական ճարտարապետության վաղագույն օրինակներից է, հայ-ասորական ճարտարապետական սերտ փոխհարաբերությունների արդյունք: Ամենայն հավանականությամբ, այն հիմնադրվել է IV դ. երկրորդ կեսին: Բազիլիկան դադարել է զոյություն ունենալ VI դ. կեսերին, մեզ անհայտ պատճառներով: Արահի տեղում՝ վերին շերտերում եղել են կավաշեն պատերով փոքր սենյակներ, որոնցից մեկում հայտնաբերվել է VI-VII դդ. մոտ 20 կնքադրոշմ: Արահի արևմտյան թևում պեղվել է ոսկերիչ-ակնագործի արհեստանոց, որտեղից գտնվել է պատրաստի արտադրանք և կրսաֆարրիկատ: Կառույցը վերջանականապես կրծանվել է 640թ.: Ամիողջ տարածքը ծածկված է մոխրի հաստ շերտով, որն արարների ավերումների հետևանք է: VIII դ. սկզբում այստեղ կառուցվել է հուռն արյուսե պալատական մեծ համալիր: Եռանավ սրահի, իսկ հետագայում հասարակական - տնտեսական նշանակությամբ շինության պատերը քանդվում են, իսկ հիմքերը մնում են նորակառույց պալատի շինության տակ:

1981-1985թթ. պեղումների ընթացքում հայտնաբերվել է 219 դրամ, որից չորսը՝ ոսկի, 17-ը՝ արծաթ, 198-ը պղինձ:

Դրամների զգալի մասը բնորոշ է նախկրնում Դվրնից հայտնաբերված հիմնական դրամական խմբերին՝ արաբական (օմսյան և արբասյան), ռյուզանդական, վրացական, էլտկուզյան:

Ոսկե դրամներից երեքը IX դ. բյուզանդական հիստամենոն - նոմիսմաներ են, իսկ մեկը Խորեզմշահ Մուհամեդ իբն Թեքիշի ոսկե դրամն է:

Արծաթե դրամներից մեկը սասանյան է, մեկը արաբա-սասանյան, իսկ մնացածը VIII-IX դդ. արաբական դրամներ են:

Պղնձե դրամների արաբական խումբը ներկայացնում է Արմինիայի ոստիկանների թողարկումները, հատված նահանգի տարրեր քաղաքներում՝ Դվրն, Առան, Բարդա:

Պղնձե թողարկումների գերակշիռ մասը XII-XIII դդ. իլդեգիզյան և վրացական դրամներն են, որոնցից առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում առաջին անգամ Դվրնից հայտնաբերված վրաց Գեորգի III-ի դրամը:

The City of Dvin and Its Excavations (1981-1985)

The ruins of Dvin, one of the capitals of medieval Armenia, a major administrative, economic, cultural, and religious center, are situated in the Ararat district of the Republic of Armenia, about 35 km south of Erevan. The city was founded in the 30s of the 4th century, during the reign of the Armenian Arsacid king Xosrov Kotak (332-339), in the district Ostan, the royal domain in the province of Ararat. The history of Dvin is of special importance in the context of the study of medieval Armenian cities. It is quite natural that many conclusions and generalizations concerning social and cultural relations, handicraft production, trade, and circulation of money in medieval Armenia have been made based on the material discovered during the long excavations of Dvin.

After the fall of the Arsacids in 428, Dvin was the capital of Armenia's governor (*marzpan*). In the 470s, under the Catholicos Giwt, the religious center of the Armenians, the patriarchal see, was transferred to Dvin from Valarsapat. The role of Dvin in the political and religious life of the country became even more important after the rebellions against the Persians in the 50s and 80s of the 5th century. According to historians, in this period Dvin was a marvelous city with cruciform squares, stone and clay houses, occupying a large territory. The impregnable citadel rose in the center of the town, with huge clay walls and about 44 towers. There was a moat around the citadel, and bridges over the water connected it with the quarters of the town. The city itself was also surrounded with strong walls, the traces of which can be seen today.

In the *marzpan* period, crafts and trade flourished in the city. According to the Byzantine historian Procopius of Caesarea, the villages around Dvin were inhabited by tillers and merchants. The latter had active commercial relations with India, Georgia, and the peoples under Persian and Byzantine rule.

Dvin was an important place for international transit trade in the Near East. Those relations are corroborated by numerous archaeological finds: various objects, coins, clay seals, and weights imported from many countries. According to Anania Širakac'i's *Mlonac'ap'k'*, five main roads started from the capital, which connected Armenia with the civilized countries and most important economic centers of the time.

In 640 Dvin was conquered by the Arabs, who perpetrated a terrible massacre in the city. From the late seventh century on, for about one and a half centuries, it was the administrative center of the province (*ostikanut'iwn*) Armenia of the Caliphate. Arab rule in Armenia was a hard time for the country's economy, handicraft

industry, and building activities, and this also affected Dvin. In the 9th-11th centuries, the city was an apple of discord between the Arab emirs and the Armenian Bagratid kings.

During about the sixty-year excavations of the city, various secular and religious buildings, fortifications, and workshops of different epochs have been unearthed both in the citadel and the quarters of Dvin. Numerous kinds of handicraft production have been found; the chronological picture of the city has been outlined, its borders have been defined, and the everyday life of different classes of Dvin's population has been examined. The excavations of the city were of great importance for the study of the social-economic history and town building of medieval Armenia.

